ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 մարտի 2018թ.

Ժամը՝ 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մելքոնյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Կ.Քարտաշյան,Ա.Կիրակոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Հովհաննիսյան

«ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով անցկացվող բաց մրցույթի ընթացակարգի մասնակիցների գնման հայտերի գնահատման արդյունքների մասին.

1. «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների ներկայացրած հայտերի գնահատման ընթացքում հանձնաժողովը պարզեց, հետևյալը՝

1.1. Թիվ 2 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի, armeps համակարգի միջոցով ներկայացրած փաստաթղթերում առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես՝ հավելված N 10-ով՝ հայտի ապահովման՝ վճարման պահանջագրի 6-րդ կետով, ներկայացրած ՀՎՀՀ-ն չէր համապատասխանում հավելված N 1-ով ներկայացրած ՀՎՀՀ-ին: Հավելված N 10-ով «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ի փոխարեն նշված էր <<Դեագա>> ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն, որը նույնպես մասնակցում էր տվյալ ընթացակարգին: Բացի դրանից եռօրյա ժամկետում «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հավելված N 6-ով և N 6.1-ով «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի փոխարեն նշված հավելվածները ներկայացված էին <<Դեագա>> ՍՊԸ-ի անունից՝ <<Դեագա>> ՍՊԸ-ի տնօրենի անվանմամբ, իսկ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիրը կնքված էր «Բիզնես Թրենդ» և <<Դեագա>> ՍՊԸ-ների միջև, որտեղ՝ <<Դեագա>> ՍՊԸ-ն հանդիսանում էր գնորդ, իսկ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ն մատակարար:

2. Հաշվի առնելով՝ սույն արձանագրության 1.1. կետով նշված անհամապատասխանությունները և «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի ձևով անցկացվող ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջները, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1.Քանի որ, «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի գնման հայտը կազմված է «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին անհամապատասխան, ուստի «Բիզնես Թրենդ» ՍՊԸ-ի գնման հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.2. «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 2 չափաբաժնով, հաջորդաբար առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին և ծանուցում ուղարկել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

2.3. Քանի որ, «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն հանդիսանում է «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե արդեն իսկ ներկայացվել է հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ, ուստի երկրորդ անգամ նշված հարցումը ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.
Նախագահ՝ ---------- Վ.Մելքոնյան

Քարտուղար՝ ---------- Հ. Հովհաննիսյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Կ.Քարտաշյան

2. ---------- Ա.Կիրակոսյան